


ՀՀ տնտեսական զարգացման միտումները 2000-2005 թվականներին*

Հայաստանի Հանրապետության տնտեսական էական վերելքը 2000 - 2005 թվականներին հաստատեց վերջին տարիներին ի հայտ եկած կայուն տնտեսական աճի միտումները: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը, 2005 թվականին առաջին անգամ գերազանցելով 2 տրիլիոնի սահմանագիծը, կազմեց մոտ 2244.0 մլրդ. դրամ՝ 2000թ. համեմատ աճելով 81.6% (համադրելի գներով): Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2005 թվականին կազմեց 1513 ԱՄՆ դոլար՝ 2000 թվականի 593 դոլարի դիմաց, և արդեն երրորդ տարին է, ինչ Հայաստանը ցածր եկամուտներ ունեցող երկրների շարքից անցել է միջին եկամուտների մակարդակ ունեցող երկրների խումբը: Տնտեսական կայուն զարգացման միտումների հաստատակամության մասին վկայում է այն փաստը, որ 2000-2005 թվականների ընթացքում ՀՆԱ-ի արտադրության միջին տարեկան աճը կազմեց 11.2%, ավելի քան 2 անգամ գերազանցելով 1995-1999 թվականների համապատասխան ցուցանիշը - 5.3%:

Գծապատկեր 1. Համախառն ներքին արդյունքի արտադրության դինամիկան 2000-2005թթ.




Վերջին վեց տարիների ընթացքում, կայուն տնտեսական աճի պայմաններում ՀՆԱ-ի կառուցվածքում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր (գծապատկեր 2): Մասնավորապես, ՀՆԱ-ի բաղադրիչներից կրկնակի (10.3-ից 21.7%) աճել է շինարարության տեսակարար կշիռը, 1.1 տոկոսային կետով ավելացել է առևտրի և հանրային սննդի տեսակարար կշիռը: Զգալիորեն – 4.5 և 3.1 տոկոսային կետով համապատասխանաբար նվազել են գյուղատնտեսության և արդյունաբերության տեսակարար կշիռները: Որոշակի նվազման միտում են ցուցաբերել այլ

* Վերլուծությունը կատարված է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա

ճյուղերի (2.6 տոկոսային կետ), տրանսպորտի և կապի (1.6) ու գուտ հարկերի (0.6) տեսակարար կշիռները:

Գծապատկեր 2. Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը 2000-2005թթ.



1	արդյունաբերություն	5	տրանսպորտ և կապ
2	գյուղատնտեսություն	6	այլ ճյուղեր
3	շինարարություն	7	գուտ հարկեր
4	առևտուր և հանրային սնունդ		

2005թ. ՀՆԱ-ի կառուցվածքում նյութական արտադրության հիմնական բազային ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության տեսակարար կշիռը կազմեց 59.2%, 2000 թվականի 55.4%-ի դիմաց:

Վերջին տարիներին տնտեսական աճի կարևոր գործոն հանդիսացավ ՀՀ կառավարության կողմից իրականացվող ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղեկան և հատկապես արտահանումը խթանող ներդրումների ներգրավման քաղաքականությունը: 2000-2005թթ. տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների ծավալը կազմեց ավելի քան 1.4 մլրդ դոլար, որից ավելի քան 960 մլն դոլարը ուղղակի ներդրումներ են, որոնց միջին տարեկան աճը կազմեց 15.8%:

Ջգալիորեն աճել են օտարերկրյա ներդրումների ծավալները դեպի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տրանսպորտը, կապը, գումավոր մետալուրգիան, հանքագործական և սննդի արդյունաբերությունը, շինարարությունը, սպասարկման ոլորտը: Անհրաժեշտ է նշել, որ

ներդրումային ակտիվության աճ է նկատվում նաև հայրենական տնտեսվարող սուբյեկտների կողմից:

ՀՀ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանը, որտեղ տարեց տարի ավելանում են պետական աջակցության ծավալները: Նպատակաուղղված աշխատանքի արդյունքում 2005թ. փոքր և միջին ձեռնարկատիրության մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմեց շուրջ 40%՝ գրեթե 2 անգամ գերազանցելով 2000թ. մակարդակը:

2005 թվականին աճի աննախադեպ բարձր տեմպ է արձանագրվել շինարարությունում՝ 135.1%, որը համապատասխանաբար 4.7 և 3.1 անգամ ավել է արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում արձանագրված աճից, ինչի հետևանքով շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (21.7%) մոտ 3 տոկոսային կետով գերազանցեց վերջիններիս տեսակարար կշիռները՝ 18.8% և 18.7% (2000թ. նշված ցուցանիշները կազմեցին համապատասխանաբար 10.3, 21.9 և 23.2%), իսկ ՀՆԱ-ի հավելածում շինարարության մասնաբաժինը՝ 5.5%, գրեթե հավասար է արդյունաբերության, գյուղատնտեսության, առևտրի և հանրային սննդի ու տրանսպորտի և կապի մասնաբաժինների գումարային ցուցանիշին -5.8%: 2000-2005 թվականների ընթացքում շինարարության ծավալների միջին տարեկան աճը կազմել է 28.5% (1995-1999 թվականներին – 8.3%), ավելի քան 2 անգամ գերազանցելով այդ ժամանակաշրջանում ՀՆԱ-ի միջին տարեկան աճը:

2005 թվականին հանրապետությունում իրականացվել են 426.4 մլրդ. դրամի շինարարական աշխատանքներ (2000 թվականին 94.9 մլրդ), այդ թվում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 391.5 մլրդ. դրամ, կամ 91.8%: Անհրաժեշտ է նշել, որ եթե 2000 թվականին շինարարության ընդհանուր ծավալից բնակարանային շինարարությանը բաժին էր ընկնում ծախսված միջոցների կեսը, ապա 2005 թվականին արդեն 60%-ը:

Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը 2005 թվականին կազմեց 343 հազ. քառ. մ, 2000 թվականի համեմատ աճելով 76.8%-ով: Ընդհանուր առմամբ 2000-2005 թվականների ընթացքում շահագործման է հանձնվել 1825 հազ. քառ. մ ընդհանուր մակերեսով բնակելի տարածք, կամ 304 հազ. քառ. մ միջին տարեկան, 1995-1999 թվականների 254 հազ. քառ. մ դիմաց:

Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով համաշխարհային փորձը, կարելի է ենթադրել, որ երկարաժամկետ հեռանկարում շինարարության ոլորտը չի պահպանի զարգացման նման բարձր տեմպեր, հետևաբար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ պայմաններ ընդհանուր առմամբ

տնտեսության իրական հատվածի, հատկապես արդյունաբերության, զարգացման համար՝ ավելացնելով ներդրումների ծավալները դեպի այդ ոլորտներ:

Գրական արդյունքներ են նկատվում նաև այն ոլորտներում, որտեղ առավել աղյուսավետ է ընթանում մասնավորեցման գործընթացը: Դրանք են՝ հանքագործական, փայտամշակման, սննդի արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, էներգետիկան և այլն: Հենվելով կուտակված գիտատեխնիկական ներուժի վրա՝ հանրապետությունում բարձր տեմպերով է զարգանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2005թ. կազմեց 1.7%:

Չնայած որոշ հաջողությունների, հանրապետության արդյունաբերական ոլորտին մինչ այժմ չի հաջողվել լիարժեք վերականգնել և օգտագործել առկա արտադրական ներուժը:


2005թ. հանրապետությունում թողարկվել է (ընթացիկ գներով) 651.4 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք և իրացվել՝ 648.3 մլրդ. դրամի կամ արտադրված արտադրանքի 99.5%-ը: 2000թ. համեմատ արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացել է 45.4%-ով: 2000-2005թթ. արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի միջին տարեկան աճը կազմեց 8.5%՝ 1995-1999թթ. 1.4%-ի դիմաց:

Չնայած արձանագրված նվաճումներին, տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունաբերության աճի տեմպերի վրա ընդհանուր առմամբ իրենց ազդեցությունն ունեցան 2000-2005թթ. տնտեսության մեջ ի հայտ եկած ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումները:

2005 թվականին 2000թ. համեմատ բարձր աճի տեմպեր են արձանագրվել պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունում – 3.27 անգամ, մետագործական արդյունաբերությունում – 2.9 անգամ, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունում – 2.9 անգամ, ոսկերչական արտադրատեսակների արտադրությունում – 175.8%, հանքագործական արդյունաբերությունում – 163.3%, մանածագործական արտադրությունում – 196.8, սննդամթերքի արտադրությունում – 140.3%, քիմիական արդյունաբերությունում – 133.9% և այլն:

Միաժամանակ, պետք է նշել, որ արդյունաբերական արտադրանքի ծավալի միջին տարեկան աճը – 8.5%, ավելին կլիներ, եթե նրա վրա բացասաբար չանդրադառնար առանձին տարիներին մի շարք ոլորտներում արտադրության ծավալների անկումը, որը պայմանավորված էր շուկայի անբարենպաստ կոնյունկտուրայով և ազգային դրամի արժեվորմամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչը որոշ չափով նվազեցրեց արտահանվող արտադրանքի մրցունակությունը:

Գծապատկեր 3. Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը 2000-2005թթ.



1	մշակող արդյունաբերություն
2	հանքագործական արդյունաբերություն
3	էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում

Ինչպես երևում է վերը բերված գծապատկերից, վերջին վեց տարիների ընթացքում արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում կայուն է մնացել միայն մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, 12 տոկոսային կետով ավելացել է հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը և 12.9 տոկոսային կետով նվազել է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը: Հանքագործական արդյունաբերության տեսակարար կշռի ավելացումը բացատրվում է ճյուղի զարգացման առաջանցիկ տեմպերով, որոնք պայմանավորված են համաշխարհային շուկայում բարենպաստ կոնյունկտուրայով, զգալի ներդրումներով և նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի կիրառմամբ:

Տարածքային կտրվածքով արդյունաբերական արտադրանքի թողարկման գերակշիռ մասը ավանդաբար բաժին է ընկել Երևան քաղաքին - 47.3%, 2000թ. 46.2%-ի դիմաց: Իրենց մասնաբաժինն արդյունաբերական արտադրանքի ծավալում ավելացրել են Սյունիքի (7%-ց մինչև 18.5%) և Արարատի (5.8%-ց մինչև 7%) մարզերը: Մնացած մարզերում, ներառյալ նախկինում խոշոր արդյունաբերական կենտրոններ հանդիսացող Շիրակի (հատկապես Գյումրի քաղաքը) և Լոռու (Վանաձոր քաղաքը) մարզերը, նկատվում է արդյունաբերական արտադրանքի մասնաբաժնի նվազման միտում: Ցածր են մնացել Տավուշի, Վայոց ձորի և Արագածոտնի մարզերի տեսակարար կշիռները:

Նշված ցուցանիշների վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Երևանի և մարզերի (ինչպես նաև առանձին մարզերի) արդյունաբերական զարգացման մակարդակների միջև դեռևս առկա են խիստ տարբերություններ, որոնք շարունակում են խորանալ՝ իրենց հետ բերելով նաև բնակչության ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի տարբերակվածություն:

Չնայած որոշ դժվարություններին, որոնք կապված էին գյուղատնտեսության արտադրության միջոցների և վառելիքի գների աճի ու առանձին տարիներին անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետ, հանրապետության գյուղատնտեսությունը պահպանեց զարգացման միտումները: 2005թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմեց 493 մլրդ դրամ, ինչը 2000թ. ցուցանիշը գերազանցում է 66.8%-ով: Գյուղատնտեսական արտադրանքի միջին տարեկան աճը կազմեց 7.2%: Բուսաբուծության բաժինը գյուղատնտեսության համախառն արտադրանքում 2000թ. համեմատ ավելացավ 10 տոկոսային կետով, կազմելով 58.4%: Համապատասխանաբար նվազեց անասնաբուծության տեսակարար կշիռը՝ կազմելով 41.6%:

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցած ծառայությունների ընդհանուր ծավալը 2005թ. կազմեցին համապատասխանաբար 886.2 (աճը 2000թ. համեմատ 2.1 անգամ) և 315.5 մլրդ. դրամ (աճը 70%): Միջին տարեկան սպառողական գների ինդեքսը կազմեց 102.7% (1995-1999թթ. – 112.1%):

Բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվել է խանութների և սպառողական շուկաների միջոցով: Մանրածախ ապրանքաշրջանառության մեջ վերջիններիս տեսակարար կշիռը 2005թ. կազմեց 83.1%, 2000թ. համեմատ աճելով 12.2 տոկոսային կետով, ընդ որում որոշակի կառուցվածքային փոփոխությունների հետևանքով 38.8-ից մինչև 47.5% ավելացել է խանութներից ապրանքների գնման տեսակարար կշիռը:

Զգալիորեն – 1.8 անգամ, աճել է մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը (55.5-ից մինչև 98 հազ. դրամից): 2005թ. բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռները պահպանեցին տրանսպորտի՝ 29.1% (2000թ. – 31.7%) և կապի՝ 25.7% (13.7%) ծառայությունները: Ողջունելի է ծառայությունների ընդհանուր ծավալում առողջապահության ծառայությունների տեսակարար կշռի ավելացումը 2.6-ից մինչև 6.8%:

Նշենք նաև, որ ինչպես և նախորդ տարիներին, ծառայությունների գերակշիռ մասը – 84.8%, բաժին է ընկել Երևան քաղաքին, 2000թ. համեմատ աճելով 6.4 տոկոսային կետով: Մարզերում ծառայությունների մատուցման տեսակարար կշիռները, ունենալով նվազման միտում, տատանվում են 0.4% - 2.8% միջակայքում, ինչը վկայում է մայրաքաղաքում ծառայությունների

մատուցման ենթակառուցվածքների խիստ կենտրոնացման և մարզերի բնակիչների ցածր վճարունակության մասին:


Չնայած տարածաշրջանում առկա որոշակի քաղաքական անկայունության՝ 2001թ. սկսած զբոսաշրջային այցերը Հայաստան պահպանում են կայուն աճ տարեկան 25-30% շրջանակներում: Ընդլայնվել է նաև այցելությունների աշխարհագրությունը: Արտաքին զբոսաշրջությանը զուգահեռ զարգանում է նաև ներքինը: Ջրոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից է համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ երկրի վարկանիշի ձևավորումը: Այդ նպատակով իրականացվել են ակտիվ գովազդային, տեղեկատվական, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքում 2005թ. զբոսաշրջիկների թիվը կազմեց շուրջ 318 հազ. մարդ, 2000թ. (45 հազ.) համեմատ աճելով ավելի քան յոթ անգամ:

Հաշվի առնելով ներկայումս տեղի ունեցող համաշխարհային գործընթացները և Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, տնտեսության վերելքի գործում բացառիկ կարևոր դեր է խաղում արտաքին առևտրային համագործակցությունը ինչպես ԱՊՀ, այնպես էլ հեռավոր արտերկրների հետ, ինչի համար լրացուցիչ խթան հանդիսացավ Հայաստանի անդամակցությունը Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը:

Իրականացվող արտաքին առևտրային քաղաքականության արդյունքում, որն ուղղված է եղել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ տեմպերի ապահովմանը, արտահանման կառուցվածքի բազմազանացմանը և նոր տնտեսական կապերի հաստատմանը, 2005թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմեց 1240.5 մլրդ. դրամ (2718.3 մլն. ԱՄՆ դոլար): Արտահանման ծավալը կազմեց 433.4 մլրդ. դրամ (950.4 մլն. դոլար), իսկ ներմուծման ծավալը 807.1 մլրդ. դրամ (1767.9 մլն. դոլար):

Արտահանման աճի առաջանցիկ միտումը, որը դրսևորվեց սկսած 1999թ., հանգեցրեց նրան, որ 2000-2005թթ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալի 2.3 անգամ աճի պայմաններում, արտահանումը աճեց 3.2 անգամ, իսկ ներմուծումը 2 անգամ: Այդ ժամանակաշրջանում արտաքին առևտրաշրջանառության միջին տարեկան աճը կազմեց 17.6%, իսկ արտահանման և ներմուծման աճերը համապատասխանաբար 26.8 և 14.3%, ինչը զգալիորեն գերազանցում է 1995-1999թթ. համանման ցուցանիշները:

Գծապատկեր 4. Արտաքին առևտրաշրջանառությունը 2000-2005թթ. /մլրդ. դրամ/



1	Արտաքին առևտրաշրջանառությունը
2	Արտահանում
3	Ներմուծում

2005թ. առևտրային հաշվեկշիռը մնալով բացասական՝ կազմեց 817.6 մլն դրլար՝ 2000թ. համեմատ ավելանալով 230 մլն դրլարով : Դրա հետ մեկտեղ բարելավվեց առևտրային հաշվեկշիռի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ կազմելով 16.7%, 2000թ. 30.8 %-ի դիմաց:

2005 թվականին 2000-ի համեմատ զգալիորեն բարելավվել են նաև ծածկույթի աստիճանի (արտահանման և ներմուծման հարաբերություն), և նորմալացված առևտրային հաշվեկշիռի (առևտրային հաշվեկշիռի և արտաքին ապրանքաշրջանառության հարաբերություն) գործակիցները, կազմելով համապատասխանաբար 0.54 և 0.3՝ 0.33 և 0.5 – ի դիմաց:

Արտահանման ծավալում 2005թ. ԱՊՀ երկրներին բաժին է ընկել ընդհանուրի 18.9%, իսկ ԵՄ երկրներին՝ 46.6%, 2000թ. 24.5 և 36%-ի դիմաց: Ներմուծման ծավալում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմեց 22.3%՝ 2000թ. 19%-ի դիմաց, իսկ ԵՄ երկրներինը – 33.4%՝ 2000թ. 34.2%-ի դիմաց:

ԱՊՀ երկրներից Հայաստանի հիմնական առևտրատնտեսական գործընկեր է մնում Ռուսաստանը, որին 2005թ. բաժին է ընկել արտահանման և ներմուծման գործարքների 12.5% և 13.2% համապատասխանաբար: Հեռավոր արտերկրներից առավել ինտենսիվ են առևտրային հարաբերությունները Գերմանիայի, Բելգիայի, ԱՄՆ-ի, Նիդերլանդների, Իրանի և Իսրայելի հետ:

2000-2005 թվականներին արտահանման ծավալում առավել բարձր տեսակարար կշիռ են ունեցել հետևյալ ապրանքախմբերը. թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք

մետաղներ և դրանցից իրեր – 40.8% և 35.4%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր – 14.8% և 33.2%, պատրաստի սննդի արտադրանք – 9.1% և 10.2%, հանքահումքային արտադրանք – 11.5% և 8.3%: Պետք է նշել, որ 2000թ. համեմատ արտահանման կառուցվածքում զգալիորեն (2 անգամ) աճեց ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի արտահանման տեսակարար կշիռը: Միաժամանակ նվազել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, հանքահումքային արտադրանքի և այլ ապրանքախմբերի տեսակարար կշիռները:

Նշված ժամանակահատվածում ներմուծման կառուցվածքում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել: Իրենց բարձր տեսակարար կշիռը պահպանեցին. թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր – 12.8% և 19.6%, հանքահումքային արտադրանք – 20.5% և 16.7%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ – 13.2% և 12.8% և այլ ապրանքախմբերը:

Կայուն տնտեսական աճն անդրադարձավ նաև բնակչության դրամական եկամուտների վրա, որոնք 2005թ. 2000թ. համեմատ (հաշվի առնելով տղաճը) աճեցին 1.45 անգամ: 2005թ. բնակչության դրամական եկամուտները կազմել են 1454.9 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 1405.1 մլրդ դրամ: Պահպանվեց 2004թ. ձեռք բերված դրամական ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման դրական միտումը: Բնակչության դրամական եկամուտներից օգտագործված գումարների մեծ մասը՝ 79%-ը կամ 1148.6 մլրդ. դրամը բաժին է ընկել ապրանքների գնման ու մատուցված ծառայությունների դիմաց վճարմանը: Նշենք նաև, որ 2000թ. համեմատ նշված ցուցանիշի տեսակարար կշիռը նվազել է 5.4 տոկոսային կետով:

Տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը 2000 թվականի 22706 դրամից, աճելով մոտ 2 անգամ, 2005թ. կազմեց 52040 դրամ: Նվազագույն աշխատավարձը 2005թ. (13000 դրամ) 2000թ. համեմատ (5000 դրամ) աճեց ավելի քան 2.5 անգամ:

2005թ. պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը կազմեց 8.1%՝ 2000թ. համեմատ նվազելով 3.6 տոկոսային կետով: